

ՏԱՆԹԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ

Տանթի Ալիկիերիի՝ իտալացի հանճարեղ ձերթողին, ծննդեան 700ամեակն է այս տարի:

Բազմաթիւ երկիրներու մէջ, արժանաւայել շուքով տօնախմբուեցաւ անոր անթառամ յիշատակը:

Միմիայն իտալիոյ չի պատկանիր Տանթին, այլ ամբողջ մարդկութեան:

Հանճարները սահմանադրուի չունին:

Տանթիի գրական վաստակը՝ արեւի նման պայծառ, կը պատկանի յաւերժութեան:

Ժամանակի աւերիչ թաթը չի կրնար հալիլ անոր: Մահը՝ մոռացութեան անդունդին մէջ չի կրնար նետել զանիկա:

Տանթիի մտքէն ու սրտէն բխած այս դործին մէջ, հիացումով կը դիտենք դադափարներու եւ զգացումներու հարուստ այլազանութիւն մը, ողողում չողով ու ջերմութեամբ, հիւսում, իրարու միախառնում այն պիտի ներդաշնակութեամբ, որ զմայլելի համանուագի տըպաւորութիւնը կը թողու: Համանուագ մը, որ դարեր ետք, պիտի շարունակէ ամէնազգի ժողովուրդներ առինքնել, որովհետեւ Տանթիի Երգը պայծառ է եւ խորհրդալիւր՝ լոյսի պէս, ջերմ է եւ հըզօր՝ սիրոյ պէս, խոր է եւ ջինջ՝ երկինքի պէս:

Կենսագրական գիծեր.

Տանթի՝ զաւակ ազնուական ընտանիքի, ծնած է Ֆիրենցէ քաղաքը, 1265ին:

Իր «Vita Nuova» գիրքին մէջ, Տանթի կը պատմէ իր երիտասարդութեան շրջանին պատահած դէպքերը:

Ինը տարեկանին կը հանդիպի Պէթրիա անունով աղջկան՝ հաւանաբար Ֆոլորոյ փոթթինարիի աղջիկը, որուն վերստին

կը հանդիպի ինը տարի ետք եւ կը սիրահարի անոր: Հակառակ իր անհուն սիրոյն, Տանթի չի կրնար ամուսնանալ այս շնորհալի աղջկան հետ, որ Սիմոն տէ Պարտի անունով մէկու մը հետ ամուսնանալէ ետք, երիտասարդ հասակին մէջ կը մեռնի, խոր վիշտ պատճառելով Տանթիին: Այս անբախտ սիրարկածը մեծ ազդեցութիւն ըրած է Տանթիի գրական գործերուն վրայ:

Տանթի իր ժամանակի դրեթէ ամէն տեսակ ուսումներուն հետեւած է, սորվելով նաեւ երաժշտութիւն եւ նկարչութիւն: Պէթրիի մահէն ետք սկսած է նաեւ իմաստասիրութեան դասընթացներու հետեւիլ: 1287ին, զինքը Պոլոնիա քաղաքին մէջ կը դառննք, ուր հաւանաբար դացած էր իր ուսումները շարունակելու նպատակով:

Չենք դիտեր ո՛ր թուականին Տանթի կ'ամուսնանայ ձեմմա Տոնաթիի հետ, որմէ երեք կամ չորս զաւակներ կ'ունենայ, Եաքոպոյ, Փիեթրոյ, Ճիովաննի եւ Անթոնիա անուններով. վերջինս, հաւանաբար Քոյր Պէթրիա անունով, մայրապետ եղած ըլլալ Ռաւեննա քաղաքին մէջ:

1295ին՝ Տանթի կը նետուի քաղաքական ասպարէզ: Նոյն շրջանին երկու զօրաւոր կուսակցութիւններ կային՝ Կուելֆեան եւ Կիպիլիֆեան անուններով: Վերջիններս տկարանալով ասպարէզը կը թողուն Կուելֆեան կուսակցութեան: Աս ալ իր կարգին երկու հակընդդէմ ճակատներու կը բաժնուի՝ ձերմակներու եւ Սեւերու: Տանթի կը պատկանէր ձերմակներու խմբակին: Վերոյիշեալ երկու խմբակցութիւններու միջեւ սկզբունքի եւ դադափարի էական տարբերութիւններ գոյութիւն չունէին: Շահու եւ նախա-

պատուութեան հարց մըն էր իրենց պայքարը:

Քաղաքական եռուն կեանք մը ունեցաւ Տանթի: Անիկա վարեց զանազան պատասխանատու պաշտօններ, շրջեցաւ քաղաքներ, հուսկ զրպարտեցին զինքը եւ դատապարտեցին տուգանքի եւ աքսորի:

Դառնութեամբ լեցուն եղաւ իր կեանքը, մանաւանդ իր կեանքի վերջին տարիները: Յուզումներով, յոյսերով եւ յուսախաբութիւններով ալեկոծ եւ թափառական կեանքէ մը ետք, 1321ին, իտալացի մեծ Քերթողահայրը իր աչքերը կը փակէ առ յաւիտ եւ կը թաղուի՝ իր ծերունդավայրէն դուրս, Ռաւեննա քաղաքին մէջ:

Տանթիի անձը.

Պայծառ իմացականութեամբ, հզօր երեւակայութեամբ եւ բազմակողմանի յատկութիւններով օժտուած ձերթող մըն է Տանթի: Իր դարուն բոլոր դիտութիւնները իւրացուցած, անիկա կը ներկայանայ մեզի որպէս հմուտ իմաստասէր, բարոյապէտ, ընկերաբան, քաղաքագէտ, աստուածաբան, հասկցող երաժշտութենէ եւ նկարչութենէ եւ քիչ մը ամէն բանէ:

Անոր հանճարը առաւելապէս կը փայլի բանաստեղծութեան, հռետորական եւ լեզուական մարդերուն մէջ:

Մտաւոր այս բազմազան դանձերու կողքին, հարուստ է նաեւ Տանթիի զգացական անբաշխարհ: Ուղեկան մըն է անոր հոգին, ալեկոծ սիրոյ, յուզումներու եւ բազմապիսի կիրքերու հզօր ալիքներով, որոնց սանձը սակայն, ամուր բռնած է իր պողպատեայ կամքով:

Իր ներքին ամբողջ ողբերգութիւնը, վերիվայրումները զսպուած ու տիրապետուած են իմաստուն մարդու առնականութեամբ: Նկարագիրի հաւասարակշռութիւնը իր մեծ առաքինութիւններէն մէկն է:

Տաղանդի եւ սրտի այս բոլոր բարեմասնութիւնները, հիանալի ներդաշնակութեամբ, անիկա կըցած է դրոշմել նա-

եւ իր գրական ստեղծագործութեան մէջ:

«Աստուածային Կատակերգութիւն»ը.

Տանթիի գլուխգործոցն է «Աստուածային Կատակերգութիւն»ը, որ բաժնուած է երեք մասերու. «Դիտխֆ», «Քաւարան» եւ «Արքայութիւն»:

Հարկը Երգերէ բաղկացող այս հատորը գլխաւորապէս եւ գերազանցօրէն այլաբանական դործ մըն է, որուն մէջ հեղինակը կը նկարագրէ եօթնօրեայ երեւակայական ճամբորդութիւն մը դէպի Դիտխֆ, Քաւարան եւ Արքայութիւն:

Գալով գիրքի խորագրին, կատակերգութիւն, ինչպէս նաեւ ողբերգութիւն բառերը, Տանթի չըջանին, մեզի ծանօթ թատերական իմաստէն տարբեր, կը դործածէին՝ ոչ այնքան դործին պարունակութիւնը, այլ աւելի այդ դործին գրական ոճը, գրելակերպը ցոյց տալու համար: Կատակերգութիւն վերնադիրը դըրուած է Տանթիի դործին, առաւելապէս ցոյց տալու համար անոր բանաստեղծական բնոյթը:

«Աստուածային Կատակերգութիւն» դործին մէջէն կ'արտացոլայ միջին դարը, միջնադարեան գիտական եւ բարոյական ըմբռնողութիւնը եւ հոգեբանութիւնը:

Դիտխֆը հոն նկարագրուած է իբր կոնաճեւ անդունդ մը. Քաւարանը՝ մենաւոր լեռ մը, իսկ Արքայութիւնը ունի Եթերէ կաղմուած ինը խաւեր, որոնք անշարժ երկիրը կը շրջապատեն: Սատանաներու զլխաւորը՝ Արուսեակը կը բնակի Երկրի կեդրոնին մէջ: Նոյնպէս միջնադարեան հոգեբանութեամբ եւ նոյն շրջանի գիտական տեսանկերու սահմանին մէջ տըրուած են շատ մը հարցերու լուծումները:

Տանթին միջին դարուն մէջ ապրած եւ ստեղծագործած է: Իր կոթողային գործը, սակայն, եթէ խորտակելով ժամանակի կապանքները, դուրս կ'ելլէ եւ կը մտնէ յաւերժութեան մէջ, ատիկա ոչ այնքան իր գրուածներուն բովանդակութեան կը պարտի, որքան այն տարրերուն, որոնք իր սրտէն եւ հանճարէն

ժայթքած են եւ ամուր կառուցուածքով
կը ցցուին դարերու կործանարար յոր-
ձանքին դէմ:

Պէտք է նշել նաեւ, որ սերտ կապակ-
ցութիւն մը գոյութիւն ունի Տանթէի
փոքր, երկրորդական դործերուն եւ «Աս-
տուածային Կատակերգութեան» միջեւ:
Փոքր դործերը, որոնցմէ ոմանք անա-
ւարտ, եղած են մէյ մէկ աստիճաններ,
որոնց վրայէն Տանթէ բարձրացած է դէ-
պի կատարելութիւն. բարոյադիտական
եւ գաղափարներու գեղեցիկ, անիկա հա-
սած է Բանաստեղծութեան մաքուր ո-
լորտներու: Ինչ որ վերջին կայանն է փո-
քր դործերուն մէջ, մեկնակէտ մը կը
դառնայ «Աստուածային Կատակերգու-
թեան» հաջորդ: Անիկանքի է Տանթէի աւ-
տիմանաւոր գարգացումը: Յաճախ զգա-
ներէ դէպի բարձր գաղաթներ կը սաւառ-
նի՝ լայն հորիզոններ բանալով մեր առ-
ջեւ: Յառաջդիմութիւնը ակներեւ է ոչ
միայն գաղափարներու հասունութեան,
այլ նաեւ անոնց անթերի ոճով արտա-
յայտութեան մէջ:

Եղած են քննադատներ, որոնք մեղա-
դրած են Տանթէին իր նպատակաւոր ճշդ-
տումներուն, աստուածաբանական եւ բա-
րոյական մտահոգութիւններուն համար,
որոնք տուժել տուած են դործին բանա-
ստեղծական ոգիին: Ճիշտ է որ Տանթէի
ստեղծագործութեան մէջ զգալի է բարո-
յականի զօրաւոր զգացումը, որ երբեմն
խանդավառութեան սահմաններէն ալ ան-
դին անցնելով՝ կրնայ խաթարել ինքնա-
բուխ ու ջինջ բանաստեղծութիւնը:

Ուրիշ մեղք մը, որ կը մատնանշուի,
այն չափազանց հոգածութիւնն է, որ բա-
նաստեղծը ցոյց կու տայ իր քերթուածին
արտաքին կառուցուածքի ընթացքին:

Ինչ ալ ըլլայ այս կամ այն քննադատի
կարծիքը Տանթէի թերութիւններու մա-
սին, այս որոշ է սակայն, որ «Աստուա-
ծային Կատակերգութիւն»ը, իր բացառիկ
ինքնատուութեամբ ամէնէն բարձր գա-
ղաթներէն մէկն է համամարդկային բա-
նաստեղծութեան, որուն մէջ խորք եւ
ձեւ, բանաստեղծութիւն եւ կառուցում

կատարեալ ներդաշնակութեամբ կ'ընթա-
նան:

Մասնաւորելով մեր խօսքը «Աստուա-
ծային Կատակերգութեան» երեք բաժա-
նումներուն իւրաքանչիւրի մասին, կ'ը-
սենք թէ «Դժոխք»ը, որուն մէջ բանա-
ստեղծը կը նկարագրէ դատապարտեալ-
ներու ահաւոր տառապանքը, յուսահա-
տութիւնը, ատելութիւնը, եւայլն, Տան-
թէի դործին ամէնէն յաջող մասը նկատ-
ուած է շատերէն:

«Քաւարան»ի մէջ նրբօրէն նկարուած է
հոգեվիճակը այն մարդոց, որոնք չունին
դատապարտեալներու մոռյլ յուսահա-
տութիւնը, այլ կ'ապրին յոյսով, որ կը
մեղմացնէ իրենց տառապանքը: Եթէ
«Դժոխք»ը կատարութեան, խաւարի եւ
լացուկոծի մոռյլ ողբերգութիւնն է,
«Քաւարան»ը ընդհակառակն՝ սպասումի,
յոյսի, մրմունջի գիրքն է, հաւասարապէս
յաջող՝ ինչպէս «Դժոխք»ը:

«Արքայութիւն»ը՝ Աստուծոյ, վերա-
ցումի, լոյսի, սիրոյ փառաբանանքի գիր-
քն է: Տանթէի համար մեր երկրաւոր
գիտելիքները նոյն ձեւով կը ներկայանան
Արքայութեան մէջ: Անոնք չեն ոգեղինա-
ցած, մաքրուած, այլ կը մնան մարդկա-
յին: Նոյնպէս մեր երկրաւոր զգացում-
ները՝ յուշերու վերածուած, կը շարու-
նակեն ապրիլ Արքայութեան մէջ, առանց
հողեղէն պատեանէն դատուած ըլլալու:
Տանթէ երկրէս շատ բան փոխադրած է
Երկինքի մէջ:

Տանթէի մեծութեան յայտարար նշան-
ներէն մէկն է նաեւ այն պարագան, որ ա-
նիկա երգիչը չէ միմիայն սիրոյ, ատելու-
թեան կամ տառապանքի, այլ իր բազմա-
լար քնարը կը թրթռացնէ մարդկային
սրտին բոլոր զգացումներով ալ անխտիր,
եւ այդ այնպիսի ուժեղութեամբ, ապրու-
մով եւ անկեղծութեամբ, որ զինքը կը
դասէ մարդկութեան ամենամեծ բանա-
ստեղծներու շարքին:

Գալով Տանթէի ռեփն, անիկա աւելի կը
քանդակէ քան կը նկարէ, աւելի կը հա-
մադրէ քան կը տարբադարէ: Իր ամէ-
նէն ուժեղ պոռթկումներն անգամ կ'ար-

տայայտէ զուսպ եւ անսեթեւեթ ոճով:
Նկարագրութիւններու մէջ չ'իջներ աւե-
լորդ մանրամասնութիւններու: Վերա-
բուժական նշտրակով չի կտրատեր իր
տիպարները, այլ զանոնք կը ստեղծէ
վրձինի քանի մը վստահ հարուածնե-
րով, յստակ եւ բնորոշիչ դիմերով, տա-
լով անոնց անմահութեան դրոշմը: Տար-
տամ, մշուշոտ, դուռնաթափ երանդներ
չկան իր դործին մէջ: Ստուերին մէջ
ձգուած են միայն երկրորդական, անհրա-
ժեշտ տարրեր:

Եւ հուսկ Տանթէ յաջողած է ստեղծել
նորակերտ լեզու մը, որ իր անսանձ երե-
ւակայութեան ատակ դործիք մը եղած է,
կատարեալ կերպով արտայայտելու հա-
մար ամէնէն խրթին, ամէնէն անշուշտի-
ւի գաղափարներն անգամ: Հռետորու-
թեան ծանր պատմութեանը նետելով վը-
րայէն, Տանթէ դարբնեց այնպիսի լեզու
մը, որ խտրական մատենագրութեան մէջ
առաջին դրական լեզուն եղաւ. լեզու մը,

որ իր ճոխութեամբ եւ ներդաշնակու-
թեամբ տիպար օրինակը հանդիսացաւ ա-
պագայ սերունդներուն: Անիկա խտալա-
կան պատմութեան մէջ բացաւ, հարթեց
նոր ճամբայ մը դէպի միասնականու-
թիւն: Անոր կերտած լեզուն շաղխը ե-
ղաւ միացնելու համար միեւնոյն ժողո-
վուրդի բաժան բաժան եղած զաւակները,
մաշխիւ՝ մէկտեղելու համար ամբողջ Ի-
տալիան, նախ դրական մարդին մէջ, եւ
ապագային ալ՝ քաղաքական միեւնոյն
դրօշի ներքեւ:

Տանթէի դործը լծակ մըն է, որուն մի-
ջոյով խտալական դրականութիւնը բար-
ձրացաւ միջազգային դրականութեան մա-
կարդակին:

Անմահ է Տանթէն, որովհետեւ անիկա
նոր եւ անսպառ լոյսի ալ մը պեղեց, ոչ
միայն խտալական՝ այլ համաշխարհային
դրականութեան մէջ:

Հ. Ե. Տ.